# AJUNTAMENT DE BÉTERA (VALÈNCIA)
# *AYUNTAMIENTO DE BÉTERA* (VALENCIA)

REGISTRE ENTITATS LOCALS / *REGISTRO ENTIDADES LOCALES 01460706* - C.I.F. P-4607200-E - TEL. 96 160 03 51
C/ José Gascón, 9 - C.P. 46117 FAX 96 169 09 24


AJUNTAMENT DE BÉTERA
REGISTRE GENERAL
DATA - 9 MAR. 2015
EIXIDA Nº 1735

***EMBAJADA DE ARMENIA***
*C/ MAYOR, 81*
*28013 MADRID*

**ASUNTO:** Moción contra el genocidio ARMENIO
Ref: ARM/secre 17/2015

Se acompaña al presente escrito, Certificación del acuerdo del Ayuntamiento Pleno de 2 de Marzo de 2015, por el que se aprobó la "Moción del Grupo político Municipal de COMPROMIS contra el Genocidio Armenio".

Lo que se les traslada para su conocimiento y efectos oportunos.

Bétera, a 4 de Marzo de 2015.
EL ALCALDE PRESIDENTE

ALCALDIA BÉTERA

Fdo.: Germán Cotanda Gil

**AJUNTAMENT DE BÉTERA** (VALÈNCIA)
***AYUNTAMIENTO DE BÉTERA*** (VALENCIA)

REGISTRE ENTITATS LOCALS / *REGISTRO ENTIDADES LOCALES 01460706* - C.I.F. P-4607200-E - TEL. 96 160 03 51
C/ José Gascón, 9 - C.P. 46117 FAX 96 169 09 24

**JUAN IGNACIO MORENO GARCIA, SECRETARIO DEL AYUNTAMIENTO DE BETERA (VALENCIA).**

**CERTIFICO:** Que el Ayuntamiento en Pleno en sesión ordinaria celebrada el día 2 de Marzo de 2015, adoptó el siguiente acuerdo, cuya parte expositiva y resolutoria se trascribe de forma literal de la minuta del acta a resultas de su aprobación:

**E. MOCIÓN DEL GRUPO POLÍTICO MUNICIPAL DE COMPROMIS CONTRA EL GENOCIDIO ARMENIO**

Por Dña Cristina Alemany Campos, portavoz del grupo político municipal de COMPROMIS, se presenta la "Moción contra el genocidio Armenio", para someterla directamente y por razones de urgencia, a la consideración del Pleno, en atención a lo previsto en el artículo 91.4 del R.O.F y R.J. de las EE.LL.

La referida moción es del siguiente tenor literal:

"…/…

ALCALDIA DE BÉTERA

***PROPUESTA CONTRA EL GENOCIDIO ARMENIO***

***EXPOSICIÓN DE MOTIVOS***

*Este año se cumplen 100 años del genocidio armenio, considerado como el primer genocidio del siglo XX.*

*Entre los años 1915 y 1921 tuvieron lugar un conjunto de masacres y deportaciones de la población armenia del actual territorio de Turquía, especialmente durante el régimen de los Jóvenes Turcos, en el que murieron 1.500.000 de armenios y otros 2.000.000 debieron abandonar sus hogares y escamparse por todo el mundo, formando la gran Diáspora Armenia.*

*Las masacres se caracterizaban por su brutalidad y la utilización de marchas forzadas con las deportaciones en condiciones extremas, que generalmente llevaba a la muerte a muchos de los deportados. Un exterminio que el abogado polaco Rafael Lemkin lo calificó como genocidio, utilizando este término por primera vez en el vocabulario internacional.*

*Actualmente Turquía niega la existencia del genocidio, lo cual han reconocido países como Uruguay, Argentina, Bélgica, Canadá, Chile, Chipre, Francia, Grecia, Italia, Líbano, Lituania, Holanda, Polonia, Rusia, Eslovaquia, Suecia, Suiza, El Vaticano, Venezuela, etc.*

*El Genocidio Armenio ha sido reconocido por 44 estados de los Estados Unidos y 3 comunidades autónomas del Estado Español (País Vasco, Cataluña y Canarias).*

*El año 1984 la ONU y el año 1987 el parlamento Europeo reconocen los hechos del Genocidio Armenio, calificándolo como crimen contra la humanidad.*

# AJUNTAMENT DE BÉTERA (VALÈNCIA)
## *AYUNTAMIENTO DE BÉTERA (VALENCIA)*

REGISTRE ENTITATS LOCALS / *REGISTRO ENTIDADES LOCALES 01460706* - C.I.F. P-4607200-E - TEL. 96 160 03 51
C/ José Gascón, 9 - C.P. 46117 FAX 96 169 09 24

**Tercero.-** Dar traslado del contenido de esta moción al Ministro de asuntos exteriores, a los Grupos políticos con representación al Congreso de los Diputados, a los Grupos Políticos con representación a las Cortes Valencianas, en la embajada de Armenia en el Estado Español, y a todo el tejido asociativo de Bétera.

Y para que conste y surta los efectos oportunos, expido la presente certificación, con el visado del Sr. Alcalde, con la reserva de lo establecido en el art. 206 del Real Decreto 2568/1986, de 28 de noviembre, en Bétera, a tres de marzo de dos mil quince.

Vº Bº
EL ALCALDE

Fdo.: Germán Cotanda Gil.

EL SECRETARIO

Fdo.: Juan Ignacio Moreno García.

*Ոչ պաշտոնական թարգմանություն*

ԲԵՏԵՐԱՅԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ (ՎԱԼԵՆՍԻԱ)

ԽՈՒԱՆ ԻԳՆԱՍԻՈ ՄՈՐԵՆՈ ԳԱՐՍԻԱ, ԲԵՏԵՐԱՅԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐՆԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ (ՎԱԼԵՆՍԻԱ)

Հավաստում եմ, Քաղաքային ժողովը 2015 թվականի մարտի 2-ի հերթական նիստի ընթացքում ընդունեց հետևյալ համաձայնագիրը, որի բացատրական և բանաձևային մասը բառացիորեն ներկայացվում է ակտի արձանագրությամբ, վերջինիս ընդունման արդյունքում.

## E. ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ՝ «COMPROMIS» ՄՈՒՆԻՑԻՊԱԼ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՄԲԻ ԸՆԴԴԵՄ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆՆ

«COMPROMIS» մունիցիպալ քաղաքական խմբի խոսնակ տիկին Կրիստինա Ալեմանի Կամպոսի միջոցով ներկայացվում է «Հայոց Ցեղասպանությանն ընդդեմ» միջնորդագիրը, որպեսզի այն ենթարկվի Խորհրդի քննությանը անմիջապես և արտակարգ պատճառներով, «Տեղական ինքնակառավարման մարմինների կազմակերպման, գործունեության և իրավական ռեժիմի մասին» կանոնակարգի 91-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն.

Նշված միջնորդագիրը ունի հետևյալ բովանդակությունը.

## ԱՌԱՋԱՐԿ՝ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ

### ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Այս տարի լրանում է 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը համարվող Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցը:

1915-1921 թվականներին ներկայիս Թուրքիայի տարածքում տեղի ունեցավ հայ ժողովրդի կոտորածների և տեղահանումների մի շարք, հատկապես երիտթուրքերի ռեժիմի ընթացքում, որի ժամանակ զոհվեցին 1.500.000 հայեր և այլ 2.000.000-ը ստիպված եղան լքել իրենց բնակավայրերը և ապաստան գտնել ամբողջ աշխարհում՝ ստեղծելով հայկական սփյուռքը:

Կոտորածներն աչքի էին ընկնում իրենց դաժանությամբ և տեղահանումներն իրականացվում էին ծայրահեղ պայմաններում պարտադրված երթերի իրականացմամբ, որոնք տեղահանվածների մեծ մասին տանում էին դեպի մահ: Այդ բնաջնջումը լեհ իրավաբան Ռաֆայել Լեմկինը գնահատեց որպես «Ցեղասպանություն»՝ առաջին անգամ ընդգրկելով այդ եզրույթը միջազգային բառապաշարում:

Ներկայումս Թուրքիան ժխտում է ցեղասպանության գոյությունը, որը ճանաչել են այնպիսի պետություններ, ինչպիսիք են Ուրուգվայը, Արգենտինան, Բելգիան, Կանադան, Չիլին, Կիպրոսը, Ֆրանսիան, Հունաստանը, Իտալիան, Լիբանանը, Լիտվան, Հոլանդիան, Լեհաստանըմ Ռուսաստանը, Սլովակիան, Շվեդիան, Շվեյցարիան, Վատիկանը, Վենեսուելան և այլն:

Հայոց ցեղասպանությունը ճանաչվել է Ամերիկայի Միացյալ Նահանգների 44 նահանգի կողմից և Իսպանիայի երեք ինքնավար համայնքների կողմից (Բասկերի երկիրը, Կատալոնիան և Կանարիասը):

1984 թվականին Միավորված ազգերի կազմակերպությունը և 1987 թվականին Եվրոպական պառլամենտը ճանաչեցին Հայոց ցեղասպանության դեպքերը՝ գնահատելով դրանք որպես մարդկության դեմ հանցագործություն:

Այս ամենը հաշվի առնելով,

**ՈՐՈՇՈՒՄ ԵՆՔ**

**Առաջինը**.- Բետերայի քաղաքապետարանը որոշում է ճանաչել պաշտոնապես Հայոց Ցեղասպանությունը և դատապարտում է մարդկության դեմ այն հանցագործությունները, որ կատարվեցին դրա ընթացքում:

**Երկրորդը**.- Փոխանցել այս միջնորդագրի բովանդակությունը Միսլատայի «Արարատ» ասոցիացիային:

**Երրորդը**.- Փոխանցել այս միջնորդագրի բովանդակությունը արտաքին գործերի նախարարին, Կոնգրեսում ներկայկացված քաղաքական խմբերին, Վալենսիայի խորհրդարանում (Cortes Valencianas) ներկայացված քաղաքական խմբերին, Իսպանիայում Հայաստանի դեսպանությանը և Բետարայի բոլոր ասոցիացիաներին:

…/…

Քաղաքապետարանի կողմից հարց է բարձրացվում «Տեղական ինքնակառավարման մարմինների կազմակերպման, գործունեության և իրավական ռեժիմի մասին» կանոնակարգի 94-րդ հոդվածի համաձայն, ուղղված ներկա անդամներին, արդյոք նրանցից որևէ մեկը ցանկանում է միջնորդությամբ հանդես գալ սույն հարցի վերաբերյալ բանավեճում: Ներկայացվում են հետևյալ միջնորդությունները

…/…

«Տեղական ռեժիմի հիմունքների մասին» ապրիլի 2-ի թիվ 7/1985 օրենքի համաձայնը, որը փոփոխվել էապրիլի 21-ի թիվ 11/99 օրենքով և դեկտեմբերի 16-ի թիվ 57/2003 օրենքով, ինչպես նաև ապրիլի 18-ի թիվ 781/1986 Թագավորական օրենսդիր հրամանագրի և այլ կիրառելի դրույթների

համաձայն, որոնք առնչվում են նոյեմբերի 25-ի թիվ 2568 թագավորական հրամանգրին, որով հաստատվում է «Տեղական ինքնակառավարման մարմինների կազմակերպման, գործունեության և իրավական ռեժիմի մասին» կանոնակարգը:

Քաղաքային խորհուրդը՝ PP-ի (Ժողովրդական կուսակցություն) (10 ձայն), UPIB-ի («Բետերայի միություն և անկախ առաջընթաց» կուսակցություն) (2 ձայն), MAS CAMARENA-ի (2 ձայն), COMPROMIS-ի («Դաշինք» կուսակցություն) (3 ձայն), PSOE-ի (Սոցիալիստական կուսակցություն) (3 ձայն), CUBE-ի («Բետերայի ուրբանիզացիաների քաղաքացիներ» կուսակցություն) (1 ձայն) խորհրդականների կողմ ձայներով, ինչը ներկա գտնվող անդամների ձայների մեծամասնությունն է կազմում, համաձայնեց.

Առաջինը.- Բետերայի քաղաքապետարանը համաձայնում է Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչման հետ և դատապարտում է մարդկության դեմ այն հանցագործությունները, որ կատարվեցին դրա ընթացքում:

Երկրորդը.- Փոխանցել այս միջնորդագրի բովանդակությունը Միսլատայի «Արարատ» ասոցիացիային:

Երրորդը.- Փոխանցել այս միջնորդագրի բովանդակությունը արտաքին գործերի նախարարին, Դիպուտատների կոնգրեսում ներկայացված քաղաքական խմբերին, Վալենսիայի պառլամենտում (Cortes Valencianas) ներկայացված քաղաքական խմբերին, Իսպանիայում Հայաստանի դեսպանությանը և Բետարայի բոլոր ասոցիացիաներին:

Եվ որպեսզի հավաստվի և պատշաճ հետևանքներ առաջացնի, կազմում եմ հետևյալ հավաստագիրը, Պարոն քաղաքապետի համաձայնությամբ, նոյեմբերի 28-ի թիվ 2568/1986 Թագավորական հրամանագրի 206-րդ հոդվածով նախատեսված սահմանափակման համաձայն, Բետերայում 2015 թվականի մարտի երեքին:

Ընդունում եմ

ՔԱՂԱՔԱՊԵՏ — ՔԱՐՏՈՒՂԱՐ

Խերման Կոտանդա Խիլ — Խուան Իգնասիո Մորենո Գարսիա